Հավելված 1

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ

ՀՀ կառավարության 2023

թվականի____ __-ի N ___-__ որոշման

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ

Հայաստանի ազգային ագրարային

համալսարան» հիմնադրամի

հոգաբարձուների խորհրդի

2023 թվականի

____ __-ի N ___-__ որոշմամբ

«ՎԱՆԱՁՈՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՔՈԼԵՋ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻՆ ՄԻԱՑՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

(կազմված է 29. 12. 2022թ. բաղկացած է 4 թերթից)

Երևան քաղաք **29.12.2022թ.**

«Վանաձորի պետական գյուղատնտեսական քոլեջ» հիմնադրամը՝ ի դեմս տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Վարդան Սիմոնյանի, որը գործում է հիմնադրամի կանոնադրության հիման վրա, մի կողմից և «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամը՝ ի դեմս ռեկտոր Վարդան Ուռուտյանի, որը գործում է հիմնադրամի կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, կնքում են սույն ՄԻԱՑՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ առ այն, որ

1.Պայմանագրի կողմերը.

1.1 «Վանաձորի պետական գյուղատնտեսական քոլեջ» հիմնադրամ (գրանցված է Հայաստանի Հանրապետության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի կողմից 13.10.2022 թ., գրանցման համարը 222.160.1269677, ՀՎՀՀ 06927275, գտնվելու վայրը ք. Վանաձոր, Ուսանողական փողոց 9):

1.2 **«Հայաստանի ազգային ագրարային համալսարան»** հիմնադրամ (գրանցված է Հայաստանի Հանրապետության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի կողմից

07.09.2012 թ., գրանցման համարը **222.160.699243**, ՀՎՀՀ՝ 01507028, գտնվելու վայրը ք.Երևան, Կենտրոն, Տերյան փող 74):

2. Պայմանագիրը կնքվում է ի կատարումն Հայաստանի Հանրապետության կառավարության 2022թ. սեպտեմբերի 8-ի «Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության «Վանաձորի պետական գյուղատնտեսական քոլեջ» պետական ոչ առևտրային կազմակերպությունը «Վանաձորի պետական գյուղատնտեսական քոլեջ» հիմնադրամի վերակազմավորելու, Վանաձորի պետական գյուղատնտեսական քոլեջ» հիմնադրամը «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամին միացման ձևով վերակազմակերպելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի փետրվարի 17-ի N 163-Ն որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին» N 1406-Ն որոշման:

3. «Վանաձորի պետական գյուղատնտեսական քոլեջ» հիմնադրամը վերակազմակերպել «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամին՝ միացման ձևով:

4. Սահմանել, որ

4. Միացման ձևով վերակազմակերպման կարգը.

«Վանաձորի պետական գյուղատնտեսական քոլեջ» հիմնադրամի կողմից կազմված և սույն որոշման համաձայն և միացման հետևանքով ընդլայնված հիմնադրամի՝ «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի որոշմամբ հաստատված փոխանցման ակտի համաձայն՝ «Վանաձորի պետական գյուղատնտեսական քոլեջ» հիմնադրամը հանձնում, իսկ «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամը ընդունում է միացող հիմնադրամի առկա հիմնական (օգտագործման իրավունքով պատկանող) և շրջանառու միջոցները, այլ գույքը, դրամական մնացորդը, ինչպես նաև դեբիտորական և կրեդիտորական պարտքերը, հաշվարկները:

Հանձնման-ընդունման աշխատանքներն իրականացվում են Հայաստանի Հանրապետության կրթության,գիտության, մշակույթի և սպորտի նախարարության 2022թ. սեպտեմբերի 13-ի N 957-Ա հրամանով ստեղծված հանձնաժողովի կողմից: Հանձնում – ընդունումը կատարվում է համապատասխան ակտի (ակտերի) միջոցով, որը (որոնք) ստորագրվում է կողմերի լիազոր ներկայացուցիչների կողմից և ենթակա է հաստատման

միացման հետևանքով ընդլայնված հիմնադրամի՝ «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի կողմից:

«Վանաձորի պետական գյուղատնտեսական քոլեջ» հիմնադրամը վերակազմակերպված է համարվում ՝ նրա գործունեության դադարման մասին իրավաբանական անձանց պետական գրանցամատյաններում համապատասխան գրառում կատարելու պահից:

5. Սույն պայմանագրի կողմերը պարտավորվում են իրականացնել միացման գործընթացի հետ կապված հետևյալ գործողությունները.

5.1 սույն պայմանագրի ստորագրման պահից հետո 30 օրվա ժամկետում կազմակերպությունների վերակազմակերպման մասին սահմանված կարգով տեղեկացնել բոլոր պարտատերերին,

5.2 սույն պայմանագրի ստորագրման պահից հետո 60 օրվա ժամկետում Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությանը ներկայացնել.

1) հիմնադրամների միացման պայմանագիրը,

2) «Վանաձորի պետական գյուղատնտեսական քոլեջ» հիմնադրամի գույքի, այլ գույքային իրավունքների, ինչպես նաև պարտատերերին և պարտապաններին վերաբերվող բոլոր (ներառյալ՝ վիճարկվող) պարտավորությունների փոխանցման ակտը,

6. Վերակազմակերպման արդյունքում ընդլայնված «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի շահույթը (պարտավորությունների նկատմամբ պատասխանատվության չափը) տնօրինվում է նրա կանոնադրությամբ սահմանված կարգով՝ առանց հաշվի առնելու շահույթի ստացման (վնասների գոյացման, պարտավորությունների առաջացման) աղբյուրները և ժամկետները:

7. «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամը՝ պատասխանատվություն է կրում իրեն միացող «Վանաձորի պետական գյուղատնտեսական քոլեջ» հիմնադրամի պարտավորությունների համար:

8. «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամը ՝ հանդիսանում է միացող «Վանաձորի պետական գյուղատնտեսական քոլեջ» հիմնադրամի իրավահաջորդը:

9. Հոգաբարձուների խորհուրդի նիստը հրավիրվում է ընդլայնված հիմնադրամի՝ «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի

նախագահի կողմից հիմնադիրի (ՀՀ կառավարության) կողմից հաստատելուց հետո մեկ ամսյա ժամկետում:

10. Սույն պայմանագիրը երրոդ անձանց համար ուժի մեջ է մտնում հիմնադրի հաստատելուց, այնուհետև «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի կողմից հաստատելուց հետո:

«Վանաձորի պետական գյուղատնտեսական քոլեջ» իմնադրամի կողմից՝

Հիմնադրամի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար՝

Վարդան Սիմոնյան

«Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամի կողմից՝

Հիմնադրամի տնօրեն (ռեկտոր)՝

Վարդան ՈՒռուտյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ՝

ԱՐԱՅԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ